

ՆՈՐԱՅԱՅՏ ՆԻԻԹԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐՂԱՊԵՏԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ


Լուսիկե Սահակեան

VAN PROVINCE AND PRELACY SHOWING THE CATHOLICOSATE OF AGHTAMAR AND THE MONASTERIES OF LIM, GDOUTS AND VARAK cir. 1914




KEY
- - - - - International Borders
- - - - - Provincial Boundaries, Van
- - - - - Sub-Provincial Boundaries, Van
- - - - - Van Prelacy
- - - - - Catholicosate and Monastic areas of influence
Regions covered by *Vani, Bizini* ր *Erzurum* ր *Vilayet* ր are in black. Additional areas only covered by *Meti Diplovi Vaspourakanoum* are in brackets.

LIM, GDOUTS AND VARAK MONASTERIES AND THEIR SWAY OVER ARMENIAN INHABITED VILLAGES cir. 1914



● Varak Monastery villages
● Lim Monastery villages
○ Villages not accounted for in *Ashkhadank* datasets 1913-14
~ Approx. administrative boundaries (state and church)

Lake Van
VAN
HAYOTS TSOR: ADMINISTRATIVE RENDERING OF ASHKHADANK (1914 DATA) IN METS DEPKERU VASPOURAKANOU (1917)
© Ara Sarafian 2022



SCALE 0 5 10 km
KEY Data from *Ashkhadank*, 1 Feb., 1914

HAYOTS TSOR ACCORDING TO CHURCH DIOCESE AND OTTOMAN STATE ADMINISTRATION
- - - - - Northern Boundary of Hayots Tsor According to Church Diocesan Boundaries (*Ashkhadank*, 1914)
— Northern Boundary of Hayots Tsor (Havasar) According to State Administrative Boundary



Հայ երաժշտագիտութեան մէջ Կոմիտաս Վարդապետի գիտական կենսագրութիւնը, հիմնականում ուսումնասիրուել է ըստ շրջափուլերի. վաղ կամ էջմիածնական, բեռլինեան եւ վերջապէս՝ վերջին կամ Կոստանդնուպոլսի շրջան:

դրան առնչուող բազմաթիւ կնճռոտ հարցերի շուրջ. հարցեր՝ կապուած Աստուածատուր Յարենցի եւ Յովհաննէս Թերլեմեզեանի մօտ պահուող Կոմիտասի իրերի, Յանձնախմբի մօտ կենտրոնացող «պատարագի» վաճառման հասոյթի հետ:

Յայտնի հանգամանքների բերումով առաւել քիչ է ուսումնասիրուած Կոմիտաս Վարդապետի՝ համերգային իրադարձութիւններով եւ երաժշտա-լուսաւորական գործունէութեամբ յագեցած կեանքի այդ վերջին շրջանը: Վերջին՝ ամենակարատեւ եւ ամենահակասական շրջանը՝ կապուած նաեւ պատերազմի, վայր ի վերումների, կորստի, երկար ու ձիգ լուծեան հետ:

Նորայայտ տեղեկութիւններից յստակեցուած եւ տրամաբանօրէն բացատրելի են դառնում 1915 թուականից յետոյ Կոմիտասի կեանքի ողբերգական ընթացքի բազմաթիւ մանրամասներ:

1910 թ. Կոմիտաս Վարդապետը ժամանում է «սուլթանների մայրաքաղաք»՝ Կոնստանդնուպոլիս: Նա իր շուրջն է համախմբում Հայ եւ օտարազգի մտաւորականների, արուեստագէտների, թուրք վերնախաւի ներկայացուցիչների:

Կոմիտասի աքսորի օրերի վկայ Արամ Անտոնեանի «Կոմիտաս Վարդապետ աքսորի մէջ» յուշերից պատկերացում ենք կազմում այն խառնիճազան Վիճակից, որ 1915 թուականին տիրում էր Պոլսում: Ընդհանուր ձերբակալութիւնների ֆօնի վրայ ինչպէս էին կազմակերպուած կառավարական մարմինների եւ օտար հիւպատոսութիւնների ներկայացուցիչների տեղաշարժը, ինչպէս էին նրանք լքում Պոլիսը, հաստատուած Գոնիայում կամ մեկնում իրենց երկրներ:

Բազմազգ մայրաքաղաք Պոլսում, թուրքիայի Հայաշատ վայրերում, ինչպէս նաեւ Եգիպտոսի քաղաքներում Կոմիտաս Վարդապետի՝ աննախադէպ յաջողութեամբ ուղեկցուող համերգներին ներկայ էին րաւ եւ օտարազգի մտաւորականներ, հոգեւորականներ, օտարերկեայ հիւպատոսութեան աշխատակիցներ, դիւանագետներ, օտարալեզու մամուլի խմբագիրներ եւ թղթակիցներ:

Առանձնակի հետաքրքրութիւն են ներկայացնում Գրիգորիս եպիսկոպոս Պաւլաքեանի «Հայ Գողգոթա» գրքի վաւերագրական տուեալները:

Հետաքրքիր տուեալներ ենք գտնում Պոլսի «Շողակաթ» տարեգրքում գետնորում Կոմիտաս Վարդապետի մասին տարողունակ յօդուածներում, մասնաւորապէս, Վարդապետի՝ մինչեւ 1919-ին Փարիզ մեկնելն ընկած ժամանակահատուածի եւ

Նորայայտ նիւթերի միջոցով փոքր ի շատէ հասկանալի է դառնում նաեւ հեղինակաւոր մարդկանց միջամտութիւնը Կոմիտասին փրկելու գործընթացում:

Կ. Պոլսի «Արեւմուտք» շաբաթաթերթում (1947 թիվ 7, էջ 9) կարդում ենք, որ Կոմիտասը ամերիկեան դեսպանատան թարգմանիչ պարոն Արշակ Շմաւոնեանի հետ դեսպանատան ծանօթ դէմքերից էր, եւ տիկին Ժողեֆին Մորգենթաուեն (Հանրի

Մորգենթաուերի տիկինը) յաճախ էր Կոմիտասին հրաւիրում իր երեկոյթներին, եւ «Կոմիտասը կ'երգէր եւ կը նուագէր ընդունելութեան ընթացքին»:

2021 թուականին, Իսպանիայի ազգային պատմական արխիւից, Իսպանիայի մշակոյթի եւ սպորտի նախարարութիւնից ստացուեցին Կոմիտասին առնչուող նոր փաստաթղթեր ու գրութիւններ, ուղարկուած Իւան Գաստանեագայ Գոնսալէսից:

Իւան Գաստանեագայ Գոնսալէսը, որը զբաղւում է քաղաքական գիտութիւններով եւ միջազգային յարաբերութիւններով, 2017 թուականին, որպէս Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի՝ Ռաֆայէլ Լեմկինի ծրագրի կրթաթոշակառու, մեկ ամիս աշխատել էր ցեղասպանութեան թանգարանում:

Վերադառնալով Իսպանիա՝ նա սկսել է հետազոտութիւններ կատարել Իսպանիայի ազգային պատմական արխիւում: Գոնսալէսը գտել է դիւանագիտական նամակներ, որոնք վերաբերում են Հայոց ցեղասպանութեանը: Նա Իսպանիայի կրթութեան նախարարութիւնից փաստաթղթերը պատճենահանելու եւ Հայաստան ուղարկելու թույլտուութիւն էր ստացել:

Իւան Գաստանեագայ Գոնսալէսի եւ Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի շնորհիւ մեր ձեռքին են եօթ նամակի եւ եօթ քարտի պատճեններ՝ գրուած 1915-16 թուականներին¹: Նամակների բնագրերը պահուում են Իսպանիայի մշակոյթի եւ սպորտի նախարարութեան քաղաքականութեան բաժնի գրադարանի եւ մուտքագրման բաժնի արխիւում: Մեզ հասած փաստաթղթերը վերաբերում են 1915 թուականի առաջին համաշխարհային պատերազմին: Սրանք Կոստանդնուպոլսի

իսպանական պատուիրակութեանն ուղղուած գրութիւններ են, որոնք առնչուում են նաեւ Կոմիտաս Վարդապետին:

Փաստաթուղթ-նամակները յստակօրէն ցոյց են տալիս, որ Իսպանիան, իսպանական թագաւորական ընտանիքն ու կառավարութեան անդամները տեղեակ էին Օսմանեան կայսրութիւնում հայերի կոտորածների եւ տեղահանութեան մասին:

Այդ շրջանում, իսպանացի դիւանագէտներից ոմանք Կոստանդնուպոլսում փորձել են փրկել Կոմիտաս Վարդապետին եւ ուղարկել Աւստրիա, ինչի վկայութիւնն են մեր ձեռքի տակ եղած փաստաթղթերը, որոնք Կոմիտասին ճանաչողներից կամ երկրպագուներից մեկի նամակագրութիւնն է: Դա Խոսէ Կինեոնէս դէ Լէոնն է (1873-1957), ով Յրանսիայում Իսպանիայի դեսպան է եղել եւ Ազգերի լիգայում Իսպանիայի ներկայացուցիչը, սերտօրէն կապուած էր միապետութեան եւ յատկապէս Ալֆոնսօ ԺԳ. Թագաւորի (1886-1941) հետ: Կարծում ենք, Կինեոնէսը Կոմիտասի արուեստին ծանօթ էր դեռ փարիզեան համերգներից: Կինեոնէսը խնդրում է Իսպանիայի Արտաքին գործոց նախարարութեանը, Վիեննայում եւ Պոլսում Իսպանիայի դեսպանութեան եւ պատուիրակութեան անդամներին պաշտպանել եւ միջնորդել Կոմիտասին փրկելու գործում: Կինեոնէսը նամակ-խնդրագիր է ուղարկում քաղաքագէտ, Իսպանիայի ակադեմիայի պատուաւոր անդամ Մարկիզ դէ Լեմային:

Carta II

27-11-15

Fecha á Constantinopla (vía Viena) y enviado por telégrafo 2-XI 1-915

Excemo. Señor

¹ Մեր խորին երախտագիտութիւնն ենք յայտնում Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի գիտական աշխատանքների գծով փոխտնօրէն Էդիտա Գոյեանին: Միա-

ժամանակ յայտնում ենք մեր շնորհակալութիւնը Աննա Համբարձումեանին իսպաներէն փաստաթղթերի հայացման համար: ² Excmo. Abreviatura de Excelentísimo.

Marqués de Lema.


Mi querido Amigo y Jefe. Varias personas, á las cuales tengo verdadero deseo de complacer, me piden que influya [ilegible] de V³. para que recomiende á nuestro Ministro en Constantinopla la nota que la incluyo referente al Padre Komitas.

Tengo en ello un [ilegible] interés y la...muy deseo cuanto haga en obsequio de el Padre.


... Y un amigo y subordinado por la gracia.

Pepe Quiñones⁴.

H-3025/4



Նամակ II
(հայերէն թարգմանութիւն)



«27-11-15

Թուագրում է Կոստանդնուպոլիս (Վիեննայով) եւ հետագրում է 1915 թուականի Առնաբերի 2-ին (2-XII-1915)

Գերապատիւ պարոն Մարքիզ դէ Լեմայ,

Իմ սիրելի ընկեր եւ ղեկավար:

Տարբեր մարդիկ, ում ես իսկապէս ցանկանում եմ հաճոյանալ, ինձ խնդրում են ազդել [անընթեռնելի] Ձեզ վրայ, որպէսզի Կոստանդնուպոլսի մեր նախարարին երաշխատրէք այն գրութիւնը, որը վերաբերում է Հայր Կոմիտասին:

Ես [անընթեռնելի] հետաքրքրում եմ դրանով եւ ... շատ եմ ցանկանում, որ դա ի կատար ածէք որպէս Աուեր Վարդապետին:

... Ե՛ւ ընկեր, ե՛ւ ողորմած եմթակալ:

Պեպէ Կինեոնէս»

Վերջինս, այսինքն՝ Մարքիզ դէ Լեման, նամակ է յղում Թուրքիայում Իսպանիայի պատուիրակութեանը, նրա ներկայացուցիչ Խուլիան Առոյոյին:

³ V. Abreviatura de Usted.
⁴ Quiñones de León y de Francisco-Martín, José María. Wenceslao Suero. París (Francia), 28.XI.1873 – 1957. Embajador de España en Francia

y representante de España en la Sociedad de Naciones. (http://dbe.rah.es/biografias/10562/jose-maria-quinones-de-leon-francisco-martin):

Carta III

Ministerio de Estado – Gabinete de Cifra.

Telegrama cifrado.


Comunicado al Señor Ministro, Señor Subsecretario, Gabinete diplomático y Sección....

Madrid 1 de Diciembre de 1915

El Ministro de Estado

Al Embajador de España en Viena.

Diga Constantinopla: "Me piden con gran interés que esa Legación proteja al Padre Komitas residente Constantinopla, Pancaldi nº 47 (83). Agradeceré a V.E⁵ haga cuando pueda en obsequio dicho sacerdote sin menoscabo acción Embajada de Estado Unidos". – Lema⁶.



Նամակ III (հայերէն թարգմանութիւն)

Նախարարութիւն - Ծածկագրերի գրասենեակ

Ծածկագրուած հեռագիր:


5 V.E. Abreviatura de Usted.
6 Salvador Bermúdez de Castro, marqués de Lema, político. Madrid, 1863-1945. El 5 de mayo de 1935 ocupaba su asiento en la RAE Ver más: https://www.rae.es/academico/salvador-bermudez-de-castro-y-

Հաղորդագրութիւն պարոն նախարարին, պարոն փոխնախարարին, դիւանագիտական խորհրդին եւ ... բաժնին

1915 թուական, դեկտեմբերի 1, Մադրիդ

Նախարարից Վիեննայում Իսպանիայի դեսպանին

Խօսում է Կոստանդնուպոլիսը. «ինձ մեծ շահագրգռութեամբ խնդրում եմ, որ այս պատուիրակութիւնը պաշտպանի Հայր Կոմիտասին, ով Կոստանդնուպոլիսի Պանկալդիի թիւ 47 (83)-ի բնակիչ է: Երախտապարտ կը լինեմ Ձեզ, եթէ մնան շնորհ անէք հոգեւորականին, չսահմանափակել գործողութիւնը Միացեալ Նահանգների դեսպանութիւն» , - Լեմա:



Carta IV

Ministerio de Estado – Gabinete de Cifra
Madrid 2 de Diciembre de 1915.

El Ministro de Estado

Al D. José Quiñones de León de España en París.

Vista su carta del 27 he telegrafiado á

olawlor y https://www.racmyp.es/contenido/21/lista-historica.html

Constantinopla recomendando á nuestro Ministro haga cuanto pueda en obsequio de Padre KOMITAS sin menoscabo como es natural de la Embajada de Estados Unidos. Lema.

Նամակ IV (հայերէն թարգմանութիւն)

Նախարարութիւն - Ծածկագրերի գրասենեակ

1915 թուական, դեկտեմբերի 2, Մադրիդ

Նախարարից Փարիզում Իսպանիայի դոն Խոսէ Կինեոնէս դէ Լէոնին

Տեսնելով ամսի 27-ի Ձեր մամակը՝ հեռագիր եմ ուղարկել Կոստանդնուպոլիս, երաշխատրելով մեր նախարարին, որ շնորհ անի չսահմանափակել Հայր Կոմիտասին, ինչը բնական է Միացեալ Նահանգների դեսպանութեանը: Լեմայ:

Յաջորդ՝ ֆրանսերէն մամակից երեւում է, որ պատուիրակութեան անդամները խնդրագրով դիմում են նաեւ Իսպանիայի Ալֆոնս ԺԳ. թագաւորին՝ խնդրելով նրան Կոմիտասին վերցնել Իսպանական դեսպանութեան հովանու ներքոյ:


Carta V

Le Réverend Père Komitas
Habitant Constantinople
Pancaldi 47 (83)

Le plus grand musicien d'Arménie, Compositeur, grand chanteur oriental, folkloriste de la musique arménienne populaire et savant musicographe de la musique orientale.

Exilé en Avril-Mai 1915 à Konia avec les nombreux intellectuels de Constantinople. Renvoyé dans cette ville à une date inconnue de ses amis d'Europe.

Ses amis et admirateurs de Paris implorent S.M. le Roi Alphonse XIII de faire mettre ce grand artiste sous la protection de son Ambassade à Constantinople.



Նամակ V (հայերէն թարգմանութիւն)

Սրբազան հայր Կոմիտաս

Պոլսոյ բնակիչ

Պանկալդի 47 (83)

Հայաստանի մեծագոյն երաժիշտ, կոմպոզիտոր, արեւելեան մեծ երգիչ, հայկական ժողովրդական երաժշտութեան բանահաւաք եւ արեւելեան երաժշտութեան երաժշտագէտ:

Բազմաթիւ մտաւորականների հետ 1915 թուի ապրիլ-մայիսին Պոլսից արքայազն է դեպի Գոնիայ: Երոպայում իր բարեկամներից անձամբ թուականին, հետ է ուղարկուել իր քաղաքը:

Նրա Փարիզի բարեկամները ու սիրողները աղաչում են Ն.Մ. Թագաւոր Ալֆոնս ԺԳ.ին այս ականաւոր արուեստագէտին դնել Պոլսում իր դեսպանութեան հովանաւորութեան ներքոյ:

Իսպանացի ղեւանագէտները փորձում են Համաձայնեցուած աշխատել նաեւ ամբիկեան դեսպանութեան հետ:

Պատուիրակութեան ներկայացուցիչ Խոսրովի Առոյնը դիմում է Թուրքիայի կառավարութեանը եւ անձամբ հանդիպում կոմիտաս Վարդապետի հետ:

Իսպաներէն գրութիւնը ուղարկուած է 1916 թուականի յունուարին, Կոնստանդնուպոլսից: Նամակի բովանդակութիւնը չնկարագրելու համար, այն տեղադրուած ենք ամբողջովին:


Portada Carta VI

Nº 20.-

Política

Constantinopla 16 de Enero de 1916


[Sello]



Ministerio de Estado Registrado 9 Feb. 1916 Sección Entrada

AL EXCMO. SEÑOR MINISTRO DE ESTADO. ETC. ETC. ETC. EL MINISTRO PLENIPOTENCIARIO DE S. M.

Contesta al telegrama referente al Padre Armenio Komitas



Carta VI.1

Legación de España en Turquía.

Nº 20.- Política.

Excmo. Señor

Muy Señor mío: Tan pronto como recibí el 4 de Diciembre el telegrama del Ministerio del digno cargo de V. E. recomendándome hiciera lo que pudiera en favor del Padre Armenio Komitas sin menos cabo, bien entendido, de la acción de la Embajada de los Estados Unidos, me entrevisté con ese sabio músico á quien pregunté qué podía hacer en su favor.

Debo antes de continuar este relato decir á V. E. que al principio de la persecución y

matanza de armenios, fue internado en Asia Menor dicho Padre per gracias á las gestiones que en su favor practicaron la Embajada Americana y otras Representaciones Extranjeras, fue devuelto á esta Capital, donde ha vivido tranquilo gracias á esas gestiones.

Pues bien, á mi pregunta contestó que lo único que deseaba era poder marchar á Viena llevándose consigo sus escritos y estudios sobre música. Visité al Señor Embajador Americano á quien hice presente todo cuando antecede y me contestó que él ya había solicitado que le trajeran á Constantinopla, y, que, por lo tanto, creía que ya nada más debía pedir, y que yo solicitara lo de su marcha á Austria.

Así lo hice en una entrevista con tuve con S.E Halil Bey, que me contestó que expondría mis deseos al Señor Ministro del Interior y que me daría una contestación. Se pasaron tres semanas sin tener ninguna respuesta y considerando que ya habían tenido tiempo de sobra para contestarme, pregunté al Señor Ministro de Negocios Extranjeros el resultado de sus gestiones: me dijo que S. E. Talaat Bey había dicho (y él me repitió sonriendo) que si se pedía su ida á Viena por ser una notabilidad música, por ese mismo motivo quieren ellos conservarle y guardarle en Turquía.

Նամակ VI (հայերէն թարգմանութիւն)

Համար 20

Քաղաքականութիւն

1916 թուական, յունուարի 16, Կոստանդնուպոլիս

[Կնքադրոշմ]

Նախարարութիւն. Արձանագրուած 1916 թուականի փետրուարի 9-ին Մութագրման բաժին

ԳԵՐԱՊԱՏԻԻ ՊԱՐՈՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

ԵՒ ԱՅԼՆ

ՊԱՐՈՆ ԼԻԱԶՕՐ ՆԱԽԱՐԱՐ

Պատասխան հայոց Կոմիտաս Վարդապետին վերաբերող հեռագրին

Նամակ VI.1 (հայերէն թարգմանութիւն)

Թուրքիայում իսպանիայի պատուիրակութիւն

Համար 20 - Քաղաքականութիւն

Գերապատիւ պարոն,

Դեկտեմբերի 4-ին, ստանալով Ձեր արժանավայել նախարարութեան հեռագիրը, որում ինձ առաջարկում էր անել ամէն հնարատր բան յօգուտ Հայր Կոմիտասի առանց, բնականաբար, միջամտելու ԱՄՆ դեսպանատան գործողութիւններին, ես հարցազրոյց վերցրի այդ իմաստուն երաժշտից, ումից հարցրի, թէ ինչ կարող եմ անել իր համար:

Այս պատմութիւնը շարունակելուց առաջ պէտք է Ձեզ ասեմ, որ հայերի հալածանքների եւ կոտորածի սկզբում ԱՄՆ դեսպանատան եւ այլ արտասահմանեան երկրների ներկայացուցչութիւնների ջանքերի շնորհիւ նրան տեղափոխել էին Փոքր Ասիա, յետոյ վերադարձրել մայրաքաղաք, որտեղ այդ ջանքերի շնորհիւ հանգիստ ապրել է:

Դէ ինչ, ի պատասխան իմ հարցի՝ ասաց, որ միակ բանը, որ կը ցանկանար, դա Վիեննա գնալ կարողանալն էր՝ իր հետ տանելով սեփական ստեղծագործութիւններն ու երաժշտական հետազոտութիւնները: Այցելեցի ԱՄՆ դեսպանին, ում ներկայացրի վերը նշուածը, եւ նա պատասխանեց, որ արդէն միջնորդել էր նրան Կոստանդնուպոլիս բերելու համար, հետեւաբար կարծում էր, որ այլեւս խնդրելու հարկ չկար, որ ես միջնորդել նրա Աւստրիա մեկնելը:

Այսպէս արեցի խալիլ բէյի հետ հարցազրոյցի ժամանակ, ով ինձ պատասխանեց, որ իմ խնդրանքը կը փոխանցի ներքին գործերի նախարարին եւ ինձ պատասխան կը տայ: Անցաւ 3 շաբաթ առանց որեւէ պատասխանի, եւ հաշուի առնելով, որ պատասխանելու համար բաւականին ժամանակ ունէի, հարց-

րի արտաքին գործերի նախարարին նրա միջ-
նորդութեան արդիւնքների մասին: Ինձ ա-
սաց, որ Թալէաթ բէլը ասել է (եւ նա ինձ
կրկնեց քմծիծաղով), որ եթէ խնդրում էր գնալ
Վիեննա որպէս անուանի երաժիշտ, այդ նոյն
հիմնաւորմամբ նրանք էլ են ուզում նրան պա-
հել Թուրքիայում:

Իսպանացի դիւանագէտները քաջ գի-
տակցել են այն մթնոլորտը, որտեղ գոյատե-
ւում էր Կոմիտաս Վարդապետը: Դրա վկա-
յութիւնն է Խուլիոյ Առոյոյի գրութիւնը:

Carta VI.2

*Bien sabía yo que mi petición no sería
atendida, tanto por miedo á que ese erudito
pudiera narrar la verdad de los horrores y
crímenes que se han cometido contra los ar-
menios, como por que quieren tener rehenes
armenios sobre todo de esa categoría quienes
poder saciar algún día el odio que les tienen.
Todo lo que tengo la honra de trasladar á V.
E en contestación al citado telegrama.*

*Dios guarde á V. E muchos años. Con-
stantinopla, 16 de enero de 1916.*

Julián M^a del Arroyo.

Նամակ VI.2 (հայերէն թարգմանութիւն)


Լաւ գիտէի, որ իմ խնդրանքը հաշուի չէր
առնուի՝ վախենալով, որ այս գիտնականը
կարող էր պատմել հայերի դէմ կատարուած
սարսափների եւ յանցագործութիւնների
ճշմարտացիութիւնը, նաեւ այն պատճառով,
որ նրանք ցանկանում են ունենալ հայ պա-
տանդներ, յատկապէս այդ դասի, որոնք մի օր
կարող են բաւարարել նրանց հանդէպ ունե-
ցած ատելութիւնը: Պատիւ ունեմ Ձեզ փո-
խանցել այդ ամէնը՝ ի պատասխան վերը
նշուած հեռագրի:

Աստուած Ձեզ պահպանի երկար տարի-
ներ:

1916 թուական, յունուարի 16, Կոստանդ-
նուպոլիս

Խուլիան Առոյոյ

*Այսպիսով, Իսպանիայի ներկայացու-
ցիչների ջանքերը Կոմիտաս Վարդապետին
փրկելու եւ Աւստրիա ուղարկելու գործում,
պսակուում են անյաջողութեամբ:*



Carta VII

Madrid, 10 de Febrero de 1916

Excmo. Señor

Don José Quiñones de León.

*Mi querido amigo: Adjunto envío a Vd.
Copia de un despacho que con fecha 16 de
Enero último ha dirigido á este Ministerio
nuestro Representante en Constantinopla, re-
ferente al Padre Armenio Komitas, en favor
del cual se sirvió Vd. escribir con vivo interés
al Marqués de Lema, con fecha 27 de No-
viembre último.*

*Lamentando que la gestión del Señor Ar-
royo no haya permitido realizar á su recomen-
dado el deseo de trasladarse á Viena, quedo
de Vd. Affmo⁷. Amigo.*

M. Villanueva.

⁷ *Affmo.* Abreviatura de Afectísimo.

Նամակ VII (հայերէն թարգմանութիւն)

1916 թուական, փետրուարի 10, Մարրիդ
Գերապատիւ պարոն Խոսէ Կիւնտնես
դէ Լէոն,

Իմ թանկագին ընկեր, կից Ձեզ եմ ու-
ղարկում Հայր Կոմիտասին վերաբերող նա-
մակի պատճենը, որը Կոստանդնուպոլիսի մեր
ներկայացուցիչը ուղարկել է նախարարու-
թիւն անցած յունուարի 16-ին, ում համար
Դուք մեծ ոգետրութեամբ գրեցիք Մարքիզ
Լեմային անցած հոկտեմբերի 27-ին:

Ցաւում եմ, որ պարոն Առոյոյի ջանքերը
հնարաւորութիւն չեն տուել իրականացնել
Աւստրիա տեղափոխուելու ցանկութիւնը:

Ձեր լաւ ընկեր Մ. Վիլլանուեա

Carta VII

*Առաջին անգամ հրատարակուող սոյն
փաստաթղթերը այն իրողութեան վկայու-
թիւնն են, որ Կոմիտասեան աշխարհագրու-
թիւնը դեռ լիովին ուսումնասիրուած չէ: Եւ
Կոմիտաս երեւոյթը, մեր խորին համոզ-
մամբ, պէտք է հետեւողականօրէն ուսում-
նասիրուի ոչ միայն համաշխարհային ե-
րաժշտութեան, այլեւ համաշխարհային
պատմութեան համատեքստում, ինչը հնա-
րաւորութիւն կ'ընձեռի նորանոր գիտական
բացայայտումների եւ ամենակարեւորը
ճշմարիտ եզրայանգումների՝ կապուած հայ
ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմ-
նադիր Կոմիտաս Վարդապետի հետ:*